

755. ՄԱՏՈՒՌԻ արևելյան պատին, նախորդի տակ, հարթ քարի վրա, 5 տող

յ է , ա ն	ՅԵՎԱՆ
է Ս Ի Ր Ի Կ	ԷՍ ԻՐԻՑ-
Մ Ի Ե Դ Ր ա ճ	ՈՒ Է. ԳՐԱԾ
Ն Է Բ Վ ա Ն	:ՇԷ: (1058) ԹՎԱԿ-
ա ն Ի Ս:	ԱՆԻՍ

Ծանոթ. Նման հնությանը թվագիր արժանագրությունները բավականին սակավ են Գուգարքում:

ԿԱՐՍԻՐ ԱՂԵԿ

756. **ԽԱՉՔԱՐ.** գյուղամիջյան գերեզմանոցում, անմշակ պատվանդանի վրա, կողանիստերին՝

ՄԲ ԽԱՉՍ ԲԱՂԵԽԱԲՍ ԼԵՐ ԶԱԲԱՐԱՆԱԲՆ
ԱԲԱՔ ԱՂԲԱԲՐՆ: (Ժեդ.)

Ծանոթ. *Քաւարանաւն* նկատի ունի ոչ թե դրախտի և դժոխքի բաժանարարը, այլ մեղքերի քակությունը՝ դրախտում տեղ ստանալու փափագով:

757. **ԽԱՉՔԱՐ.** գյուղից 1 կմ արևմուտք, մատուռի մեջ.

ԹՎԻՆ :ՈԾՁ (1207):

Ծանոթ. Խաչքարը մրապատ է մոմի հալվածքով հագեցած, և խորանի գրերը չեն կարդացվում:

ԱՅԳԵՅԱՏ (Իգահատ, Դանուշավան)

Գտնվում է Դեբեդի ծախակողմյան դարավանդի վրա, Օձունից հարավ, որի «Դիրք տեղւոյն չէ գովելի, մանաւանդ զուրկ են ի կողմանէ ջրոյ»:⁶⁷ Հին անունը հայտնի չէ վերապահել է գյուղից արևելք, ծորամիջում գտնվող Իգահատ-Այգեհատ անունը: Ջալալյանցի ասելով՝ գյուղը «... գայս անուն ընկալաւ սա ի դրից տեղւոյն, զի այգիք ցայս վայր գան, և ասդէն դադարին. ուստի ասացաւ այգեհատ»:⁶⁸ Նույնը կրկնում է նաև Լալայանը. «Գիւղը իւր անունն ստացել է այն հանգամանքից, որ այստեղ այգիները հատնում են, այսինքն սրանից հարաւ այլևս այգիներ չկան»:⁶⁹ Տեղական բարբառում այգեհատ նշանակում է ոչ թե այգին հատել, կտրել, էտել, այլ այգին հատած, վերջացած ավարտած, պրծած: Գյուղանունը, ուրեմն, ծագել է իր դիրքի (= դրից), տեղանքի հետևանքով, որից դենը՝ հարավ, այլևս այգիներ չկան: Զորամիջյան Իգահատը լքվել-ամայացել է ժՁ դարի վերջերին, իսկ վերին հարթակի գյուղը՝ հավանաբար Շահ Աբասի ժամանակներում: Սակայն վերջինս վերաբնակեցվել է ժԸ դ., որի բնակիչները Շահվերդյան ազնվական տոհմից են, որոնք ոչ տանուտեր, ոչ էլ գյուղական դատավոր չունեին, այլ

⁶⁷ *Ջալալյանց*, Ա, էջ 102:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ «Ազգ. հանդ», VII-VIII, էջ 343:

«ամնիքապես ենթարկվում էին գաւառապետին և հաշտարար դատաւորին»;⁷⁰ Իսկ Շահ-
վերդյանների ազնվական գերդաստանը, ըստ Գ. Աղանյանցի, եկել է Բջնի գյուղաքա-
ղաքից ժԸ դարում:

Զնայած այս ամենին, ներկա Այգեհատը բնակեցված է եղել վաղ ժամանակներից. գյուղի հյուսիսային եզրում կան իին եկեղեցու ավերակներ, իսկ արևելյան մասում՝ Ե-ժԶ դարերին բնորոշ կոթողներով զերեզմանոց: Այստեղ պահպանվում է Ս. Կիրակի (կոչվում է նաև Ս. Սարգիս) կոպտակուփ քարով շարված, քանիցս վերաշինված, այժմ փայտածածկ մի մատուռ և մի խոշոր խաչքար, որի պատվանդանի վրա փորագրված է *մեղուցեալ խոստորովի* կողմից մատուռը կառուցելու պատմությունը:

758. **ԽԱՉՔԱՐ.** Մատուռի մոտ, երկատված, կոպտաճակ միակտոր պատվանդանի վրա, 6 տող.

[illegible]

ԿԱՍՏԱՆԻ ԱՄԲԵՆԱԿԱՆԻՆ ԱՅ ԵՄ՝ ՄԻԵՂՈՒՑԵԱՆ ԽՈՍՏՐՈԿ, ՍՆՈՒՑԱԾՆԵՐՈՒՄ, ՈՂՈՐՄՈՒԹԱՐԽՆ ԻՆՉ, ՈՒԺԱՐԻՒ ԶԻՄ ՅՈԳՈՂԱՏՐԱՍՆՆԵՐՈՒՄ ԵՏՈՒ ԵՒ ԶՄԱՏՈՒՈՆ ՇԻՆԵՑԻ ԵՒ ԶԽԱԶՄ ԿԱՆԳԱՆԵՑԻ: ՈՐԵ ԵՐԿՐՊԱԳ ԷՔ՝ ԻՆՉ ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵԱՆ ԽՆՂՐԵՑԷՔ ՅԱՅ: ԶԱՌԻԾՆ ԵՒ ԶՈՂԱՆՆԵԱ ՅԻՇԵՑԷՔ Ի ԲԱՐԻ, ԶԻ ՇԱՏ ԱՇԽԱՏԵՑԱՆՔ, ԻՇԵՑԱՆԷ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Առաջին տողի *ամենակալին Այ* և *սնուցած* բառերի մասում քարը ջարդված է, բայց վերականգնումը հուսալի է: Երկրորդ տողի *ուժարիւ* (եթե ճիշտ է վերծանությունը) *յոժարիւ* (= հոժարությամբ, կամովին) բառն է: Նույն տողի *պատրաստն* հաճախ հանդիպում է նաև *պաշարն*, *պահուստն*, *արդիւնս* ձևով: Զորքորդ տողի *ինձ մեղաց թողութեան խնդրեցէք* կապակցության ուղիղ ձևն սպասելի էր. *ինձ մեղացն թողութիւն խնդրեցէք*: Շատ աշխատած Առյուծը (= Առիւծ) և *Ռհաննեսը* մատուռը կառուցող և խաչքարը հորինող վարպետներն են: Նրջիսը Սարգիս Մեծի դուստրն է, հայտնի նաև Գողգոթավանքի 1223 թ. արձանագրությունից, մահացած 1234 թ.:

Խաչքարի պատվանդանի մակերեսը հղկված չէ, իսկ երեսանց ու խիտ փորված գրե-
րը դժվար են կարդացվում և որոշ դեպքերում մնում են երկմտելի:

ԱՌԻԺՆ անվան վերժանությունը կասկածելի է (խմբ.):

Նույն տեղում:

